Հաստատված է ՀՀ ԱԱՏՄ կառավարման խորհրդի
2022 թվականի հունվարի 25-ի N 03-Լ որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2022թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ

2021 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N755-Լ որոշմամբ հաստատված Տեսչական մարմնի կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով՝ կազմվել է Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (այսուհետև՝ Տեսչական մարմին) 2021 թվականի գործունեության տարեկան հաշվետվությունը (այսուհետ՝ Հաշվետվություն): Հաշվետվությունը արտացոլում է հաշվետու տարում կատարված աշխատանքները, իրավիճակի զարգացումները, ինչպես նաև փաստացի տվյալների համեմատականը նախորդ ժամանակաշրջանում իրավիճակներն արտացոլող տվյալների հետ:

Տեսչական մարմնի նպատակն է՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով առողջապահության բնագավառի իրավական ակտերի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերի պահանջների պահպանման ապահովումը:

Տեսչական մարմնի խնդիրներն են՝ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման, բժշկական օգնության և սպասարկման, դեղերի շրջանառության, աշխատանքային իրավունքի՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտներում Հայաստանի Հանրապետության օրենքների ու այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողությունը, ինչպես նաև կանխարգելիչ միջոցառումների իրականացումը բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման, բժշկական օգնության և սպասարկման, դեղերի շրջանառության, աշխատողների անվտանգության ապահովման, առողջության պահպանման և աշխատանքային հարաբերությունների կարգավորման դաշտում:

☏ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107
ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129

Տեսչական մարմնի կանոնադրական գործառույթների շրջանակներում 2021 թվականի տարեկան գործունեության ծրագրով նախատեսված միջոցառումներից, վերահսկողական (ստուգում, վարչական վարույթ) գործառույթներից և իրազեկման աշխատանքներից բացի, Տեսչական մարմինն իրականացրել է նաև մի շարք չպլանավորված աշխատանքներ, մասնավորապես՝ հակահամաճարակային վերահսկողական ստուգայցեր, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի օգոստոսի 22-ի թիվ 1071-Ա որոշմամբ սահմանված իր լիազորությունների շրջանակներում իրականացվող այլ վարույթներ և միջոցառումներ:

Բացի վերահսկողական գործառույթներից, Տեսչական մարմինը մշտապես քայլեր է ձեռնարկում բարելավելու գործող օրենսդրական դաշտը, տեխնիկական և կադրային հագեցվածությունը, միջազգային համագործակցությունը, թվային նոր գործիքների ներդրումը, ինչպես նաև նոր ընդունվող կադրերի վերապատրաստման և այլ զարգացման ուղղություններով:

Մասնավորապես.

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի ապրիլի 30-ի թիվ 718-Ն որոշման մեջ կատարվել են լրացումներ և փոփոխություններ՝ հաստատվելով Տեսչական մարմնի կողմից վերահսկողության ենթակա 2 ոլորտի 3 ստուգաթերթ,

2) Տեսչական մարմնի կողմից վերահսկողական (ստուգում, վարչական վարույթ) գործառույթների շրջանակներում անկախ փորձագիտական եզրակացություն ունենալու նպատակով 2021 թվականի պահպանման ծախսերի նախահաշվում և գնումների պլանում հատկացվել են ֆինանսական միջոցներ՝ ջրի, աղմուկի, թրթռման և այլ փորձաքննություններ պատվիրակելու համար,

3) Տեսչական մարմինը՝ 2021 թվականին ստանձնած Անկախ Պետությունների Համագործակցության անդամ երկրների աշխատանքի տեսչական մարմինների նախագահությունը լիիրավ կատարեց: Արդյունքում, քայլեր են ձեռնարկվում 2023 թվականից ստանձնելու «Աշխատանքի միջազգային տեսչությունների ասոցիացիայի»

☏ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107
ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129

լիիրավ անդամի պարտականությունները ստանձնելու ուղղությամբ՝ քվեարկության ձայնի իրավունքով,

4) Տեսչական մարմնի և ՄԱԿ զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակի միջև 2021 թվականին հունիսի 10-ին կնքվել է հուշագիր, որի շրջանակներում Տեսչական մարմնին ամրակցված վարչական շենքի համար նախագծանախահաշվային աշխատանքներն ՄԱԶԾ կողմից կատարվելու են բարեգործական հիմունքներով, ինչպես նաև ֆինանսավորելու են էներգախնայող աշխատանքների իրականացման համար նախատեսված ֆինանսական միջոցների 20%-ի չափով,

5) Աշխատանքային իրավունքի ոլորտում Տեսչական մարմնի գործունեության արդյունավետության բարձրացման, դիմում բողոքներին արձագանքելու, թափանցիկության ապահովման և կապը հանրության հետ ավելի արագ կազմակերպելու նպատակով գործարկվել է աշխատողներից բողոքների ստացման www.employeeprotect.am համակարգը: Կայքը լիարժեք գործարկվել է 2021 թվականի հոկտեմբերի 1-ից: Նախապատրաստվել է վիճակագրական վերլուծության համար անհրաժեշտ տեղեկատվությունը,

6) Վերսկսվել է Հիվանդությունների հսկողության էլեկտրոնային համալիր միջազգային համակարգի ներդրման գործընթացը, վերջինիս շրջանակներում կազմակերպվել և իրականացվել է մասնագետների վերապատրաստումը,

7) Տեսչական մարմնի մասնակցությամբ՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) և ՀՀ ԱՆ հետ համատեղ ԱՀԿ գործիքակազմով գնահատվել են սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետերի կարողությունները, արդյունքում՝ ներկայացված առաջարկությունների հիման վրա սահմանի անցման կետերը ձեռնարկել են համապատասխան միջոցառումներ՝ Միջազգային առողջապահական (բժշկասանիտարական) կանոններին և ԱՀԿ պահանջներին (մոտեցումներին) համապատասխանեցնելու ուղղությամբ,

8) Աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից (ILO) «Միասին աջակցենք Հայաստանում իրավունքի պաշտպանությանը» ծրագրի շրջանակներում

☏ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107
ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129

իրականացվել է Տեսչական մարմնի աշխատակիցների վերապատրաստման կարիքների գնահատում, նոր թվային գործիքների ներդրման տեխնիկական ծրագրերի մշակում,

9) Տեսչական մարմինը և «Վորլդ Վիժն Ինթերնեյշընլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը ստորագրել են համագործակցության հուշագիր: Նշված հուշագրի շրջանակներում նախատեսվում է 2022 թվականի ընթացքում բարձրացնել պարտադիր կամ հարկադիր աշխատանքի ենթադրյալ դեպքերի հայտնաբերման և գնահատման կապակցությամբ Տեսչական մարմնի աշխատողների մասնագիտական կարողությունները և շարունակաբար կատարելագործել դրանք, աջակցել պարտադիր կամ հարկադիր աշխատանքի վերաբերյալ օրենսդրական դաշտի կատարելագործմանը և կիրառելիության ապահովմանը, ինչպես նաև այս կապակցությամբ ինստիտուցիոնալ մեխանիզմների ներդրմանն ու հզորացմանը,

10) Շարունակաբար համալրվում է անձնակազմը, 2019թ-ի նույն ժամանակահատվածի հետ համեմատած՝ 280 հաստիքից համալրված էր 192-ը՝ 69%, հաշվետու ժամանակահատվածի դրությամբ 340-ից համալրված են 261 հաստիք՝ 77%,

11) 2021 թվականի օգոստոսի 13-ի Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի արտահերթ նիստով Տեսչական մարմնի 2021 թվականի բյուջեի խնայողություններից 58.3 մլն ՀՀ դրամ ուղղվեց 31005 միջոցառմանը, որի արդյունքում ձեռք բերվեցին անհրաժեշտ համակարգչային տեխնիկա, գրասենյակային և այլ անհրաժեշտ վարչական գույք՝ հնարավորինս ապահովելով աշխատակիցներին նվազագույն գրասենյակային պայմաններով,

12) Ավարտվում են մարզային տարածքային կենտրոններին հատկացված համայնքապատկան գրասենյակների վերանորոգման աշխատանքները՝ Տեսչական մարմնին 2021 թվականին հատկացված պետական բյուջեի խնայողությունների հաշվին:

I. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԿՈՂՄԻՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

☏ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107
ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129

Տեսչական մարմնի 2020 թվականի գործունեության կատարողականի գնահատումն իրականացվել է՝ հիմք ընդունելով «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով սահմանված և ՀՀ կառավարության 2015 թվականի հունիսի 25-ի թիվ 693-Ն որոշմամբ հաստատված չափորոշիչները և հաշվի առնելով Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2019 թվականի հունիսի 11-ի թիվ 03 որոշմամբ հաստատված «ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի գործունեության կատարողականի գնահատման մեթոդաբանությունը»: (Հավելված 1)

II. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Տեսչական մարմինը կազմել և Տեսչական մարմնի կառավարման խորհրդի հաստատմանն է ներկայացրել «Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2021 թվականի գործունեության տարեկան» Ծրագիրը: Ծրագրի շրջանակներում նախատեսվել էր 2021 թվականին իրականացնել «Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի վերահսկողության ոլորտներում խնդիրների և ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված» 32 (այդ թվում, օրենսդրական ակտեր՝ 18) և «Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կանխարգելիչ և իրազեկման» 21 միջոցառումներ: Նշված միջոցառումներից հաշվետու ժամանակահատվածում իրականացված միջոցառումները նկարագրված է Հավելված 2-ում:

III. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՌԻՍԿԵՐԻ ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Տեսչական մարմինը Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 755-Լ որոշման հավելվածի 10-րդ կետի համաձայն՝ օրենքով սահմանված

☏ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107
ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129

դեպքերում և կարգով բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման, բժշկական օգնության և սպասարկման, դեղերի շրջանառության, աշխատանքային իրավունքի՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտներում ապահովում է ռիսկերի կառավարումը և Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացումը, ինչպես նաև կանխարգելիչ միջոցառումների իրականացումը բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման, բժշկական օգնության և սպասարկման, դեղերի շրջանառության, աշխատողների անվտանգության ապահովման, առողջության պահպանման և աշխատանքային հարաբերությունների կարգավորման ոլորտներում:

Տեսչական մարմնի գործունեության սկզբունքներն ապահովելու, ինչպես նաև վերահսկողական ոլորտներում ռիսկերի առկա իրավիճակի վերաբերյալ վերլուծությունն իրականացնելու նպատակով հիմք են հանդիսացել Տեսչական մարմնի կողմից 2019-2021 թվականների ընթացքում իրականացված վերահսկողության արդյունքները՝ պայմանավորված առավել ռիսկային ուղղությունների բացահայտմամբ, որոնցում առավել հաճախ են արձանագրվել իրավախախտումներ:

Տեսչական մարմինը, ըստ վերահսկողության ոլորտների, վարել է տվյալների բազա՝ ըստ Տեսչական մարմնի կողմից վերահսկվող տնտեսավարող սուբյեկտների և ռիսկայնության աստիճանը որոշող չափանիշներով՝ վերջիններիս տրված գնահատականի վերաբերյալ: Տվյալների բազայի ձևավորման համար Տեսչական մարմնի կողմից հավաքագրվել է համապատասխան տեղեկատվություն՝ ինչպես տեսչական մարմնի կանոնադրական գործառույթների իրականացման արդյունքում առկա տեղեկատվությունից, այնպես էլ Տեսչական մարմնի տեղեկատվական բազայում չընդգրկված և ստուգում իրականացնող պետական այլ մարմինների միջև տնտեսավարող սուբյեկտների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման հիման վրա իրենց տվյալների բազաներում առկա համապատասխան տեղեկատվությունից: Բազայում առկա տեղեկատվության հիման վրա Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի 22-ի թիվ 1124-Ն որոշման պահանջների համաձայն ըստ

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107

տնտեսավարողների և ըստ ոլորտների հաշվարկվել են տնտեսավարող սուբյեկտների ռիսկայնությունը և դասակարգվել ըստ բարձր, միջին և ցածր ռիսկայնության: Այսպիսով, 2021 թվականի հաշվետու ժամանակահատվածի համար Տեսչական մարմնի վերահսկողության ոլորտում ռիսկի առկա իրավիճակի վերաբերյալ վերլուծությունն իրականացվել է բազայում առկա տեղեկատվության և ռիսկայնության չափորոշիչները սահմանող իրավական ակտերի կիրառմամբ:

Վերը նշված բազայի հիման վրա կազմվել և Տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2020 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 16-Լ որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից 2021 թվականի ընթացքում իրականացվելիք ստուգումների» Ծրագիրը: Ծրագրի շրջանակներում 2021 թվականի ընթացքում նախատեսվել է իրականացնել թվով 266 թեմատիկ ստուգում՝ 241 տնտեսավարող սուբյեկտների մոտ (ըստ չորս բնագավառների/ոլորտների), որոնցից՝ 186 բարձր ռիսկայնությամբ, 67 միջին ռիսկայնությամբ, 13 ցածր ռիսկայնությամբ:

Տեսչական մարմնի կողմից 2021 թվականի հաշվետու տարում որդեգրած քաղաքականությունը միտված է եղել վերահսկողության ենթակա տնտեսավարող սուբյեկտներում ռիսկերի նվազեցմանը՝ վերահսկողական աշխատանքները առավել արդյունավետ իրականացնելու և թիրախները ճիշտ գնահատելու միջոցով: Արդյունքում, 2021 թվականին իրականացվել են 303 թեմատիկ ստուգում: Նշված 303 ստուգումից՝ 54 (2020թ.-ին հրապարակած հանձնարարագրի հիման վրա իրականացված ստուգման շրջանակներում՝ 24 և 2021թ.-ին հրապարակած հանձնարարագրի հիման վրա իրականացված ստուգման շրջանակներում՝ 30) հանձնարարագիր հրապարակվել է կարգադրագրի պահանջների կատարման նպատակով վերստուգում իրականացնելու համար, իսկ 53 ստուգում իրականացվել է 2020 թվականի հանձնարարականի հիման վրա, որոնց արդյունքում ստուգումն սկսվել է 2020 թվականի վերջին և ավարտվել 2021 թվականին:

Վերը նշված 303 թեմատիկ ստուգումից 33 ստուգում ընթացքի մեջ է և ավարտվելու է 2022 թվականին: Նշված ստուգումների արդյունքում տրվել է 127 կարգադրագիր՝ խախտումները վերացնելու համար, որից 8-ը վերստուգման արդյունքում:

☏ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107
ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129

Ստուգումների մասին առավել մանրամասն ինֆորմացիան ներկայացված է սույն Հաշվետվության VII գլխում:

IV. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԻՐԱԶԵԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Տեսչական մարմնի իրավասությանը վերաբերող իրավական ակտերով սահմանված պահանջների վերաբերյալ իրազեկման աշխատանքներ են կազմակերպվել մամուլի հաղորդագրությունների տեսքով, «Թեժ գիծ» ծառայությունով, հարցազրույցների ու ասուլիսների կազմակերպմամբ, Տեսչական մարմնի ֆեյսբուքյան պաշտոնական էջով ստացված հարցադրումներին ի պատասխան, ինչպես մարզային այնպես էլ մայրաքաղաքում կազմակերպված ֆոկուս խմբերի հետ իրազեկման սեմինարների միջոցով:

Հրապարակումները հիմնականում եղել են COVID-19 համավարակով պայմանավորված իրավիճակի, COVID-անվտանգության նորմերի վերահսկման նպատակով ՀՀ ողջ տարածքում Տեսչական մարմնի ստուգայցերին: Վերջինների մասին պարբերաբար տեսանյութեր են տեղադրվել, իսկ յուրաքանչյուր աշխատանքային շաբաթվա վերջում ամփոփ նյութ է հրապարակվել՝ Տեսչական մարմնի մասնագետների կողմից նախորդ շաբաթվա ընթացքում իրականացրած ստուգայցերի մասին:

Հանրությունն իրազեկվել է ՀՀ ԱՆ 2021 թվականի N 84-Ն հրամանով նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի թիվ 17-ն և 2020 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ 24-ն հրամաններում կատարված փոփոխությունների, ինչպես նաև չպատվաստված աշխատողների համար ԱՆ նոր հրամանի մասին:

Տեսչական մարմնի աշխատակիցները մասնակցել են Հայաստանում մեկնարկած «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման իրազեկման և կանխարգելման» տեղեկատվական արշավի ամփոփիչ միջոցառմանը, ինչի մասին ևս իրազեկվել է:

☏ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107
ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129

Կատարված աշխատանքների, ինչպես նաև արձանագրված արդյունքների մասին հանրությանն իրազեկելու նպատակով ՖԲ էջում պարբերաբար հրապարակվել են «Հաջողության պատմություններ»:

Հաշվետվության մեջ նշված աշխատանքների մի մասը լուսաբանվել է ԶԼՄ-ների կողմից: Հիմնական նյութերը տեղադրվել են ինչպես Տեսչական մարմնի ֆեյսբուքյան էջում, այնպես էլ պաշտոնական կայքում:

Հաշվետու ժամանակահատվածում Տեսչական մարմնի վերահսկման ոլորտներում իրականացվել է իրազեկման 508 աշխատանք, այդ թվում.

- բնակչության շրջանում սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ոլորտում՝ 281, որից համավարակով պայմանավորված՝ 249,
- աշխատանքի վերահսկողության ոլորտում՝ 70,
- բժշկական օգնության և սպասարկման ոլորտում՝ 10,
- դեղերի շրջանառության ոլորտում՝ 15,
- ոլորտային իրազեկումներից զատ կատարված այլ աշխատանքներ՝ 132:

V. ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Տեսչական մարմնի խորհրդատվական աշխատանքների գերակշիռ մասը հաշվետու ժամանակահատվածում կազմել են սեփական նախաձեռնությամբ իրականացված խորհրդատվական գործունեությունները, որի ժամանակ լուսաբանվել են ոլորտներին վերաբերվող ընդհանուր բնույթի հարցեր: Տեսչական մարմնի կողմից տրվել է **6523** խորհրդատվություն, այդ թվում **4411**՝ «Թեժ գիծ» ծառայությամբ ստացված հարցերի վերաբերյալ, որից ըստ ոլորտների.

Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ոլորտ

Տեսչական մարմնի կողմից իրականացվել են **3703** խորհրդատվական աշխատանքներ, որից.

- **2034-ը՝** տնտեսավարող սուբյեկտներին տրված խորհրդատվություն ՀՀ առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 04-ի թիվ 17-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելման նպատակով կիրառվող» N 3.1.2-001-20 սանիտարական կանոնների, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2020 թվականի սեպտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելման նպատակով հանրակրթական (բացառությամբ՝ նախադպրոցական) ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում կիրառվող ՍԿ N 3.1.2-004-20 սանիտարական կանոնները հաստատելու մասին» թիվ 24-Ն հրամանի և ՀՀ առողջապահության նախարարի 2020 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 23-Ն հրամանով հաստատված «Անհատական պաշտպանության միջոցների ցանկը, կիրառման դեպքերն ու կարգը» սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների պահանջների պահպանումը պարզելու նպատակով:

- **1669-ը՝** թեժ գծով ստացված հեռախոսազանգերի վերաբերյալ տրվել են պարզաբանումներ՝ COVID-անվտանգության կանոնների պահպանման, պաշտպանիչ միջոցներ չկրելու, սոցիալական հեռավորությունը չպահպանելու վերաբերյալ: Զանգեր են ստացվել նաև աղմուկի վերաբերյալ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության

☏ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107
ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129

առողջապահության նախարարի 2002 թվականի մարտի 06-ի թիվ 138 հրամանով հաստատված «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III-11.3 սանիտարական նորմերի, հյուրանոցներում և հանգստյան տներում անվտանգության կանոնները ոչ պատշաճ պահպանելու վերաբերյալ:

Աշխատանքային իրավունքի՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտ

Տեսչական մարմնի կողմից իրականացվել են **1383** խորհրդատվական աշխատանքներ, որից.

- **77-ը**՝ տնտեսավարող սուբյեկտներին տրված խորհրդատվություն՝ աշխատողների աշխատավարձի, հավելավճարների վճարման, աշխատաժամանակի վերաբերյալ և այլն:
- Նշված ոլորտի շրջանակներում հնչեցրած հարցերին՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հուլիսի 15-ի N 1089-Ն որոշման և ոլորտը կանոնակարգող և Հայաստանի Հանրապետությունում գործող այլ իրավական ակտերի շրջանակներում տրվել են պարզաբանումներ:

Կազմակերպվել են սեմինարներ՝

- «Աշխատանքային իրավունքների պաշտպանության հիմնահարցերը Հայաստանում և լուսաբանման առանձնահատկությունները» խորագրով սեմինարին, որին ԶԼՄ ներկայացուցիչներին է ներկայացվել աշխատանքային օրենսդրության՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման վերահսկողության արդյունքներով արձանագրված խախտումների վերլուծությունը, ներկայացվել է Տեսչական մարմնի լիազորությունների և դրանց իրականացման գործիքակազմի վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն, անցկացվել է բովանդակալից քննարկում,
- «Հանուն աշխատանքի. հաշվետու և ներառական աշխատաշուկայի» ծրագրի շրջանակներում կայացած «Հայաստանում աշխատանքային իրավունքների վերահսկման էլեկտրոնային հարթակի» ստեղծման թեմայով,

☏ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107
ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129

- «2021 թվականի հուլիսի 1-ից աշխատանքային օրենսդրության կիրարկման նկատմամբ պետական վերահսկողությունը» թեմայով,

- ՁԼՄ-ներով հրապարակվել են տեսչական մարմնին վերապահված լիազորությունների և իրականացվող աշխատանքների վերաբերյալ հարցազրույցներ, ինչպես նաև հարուցված վարչական վարույթների ընթացքը լուսաբանող տեսահոլովակներ՝ շինարարական հրապարակներում իրականացվող վերահսկողական աշխատանքների, և իրավական վերահսկողության աշխատանքների վերաբերյալ:

- **1306-ը**՝ թեժ գծով ստացված հեռախոսազանգերի վերաբերյալ տրվել են պարզաբանումներ: Տնտեսավարողների կողմից թեժ գծով բարձրացված հարցերի մեծ մասը վերաբերել է.

- աշխատանքի պայմանների և աշխատողների իրավունքների պահպանմանը,
- առողջությանը պատճառված վնասի հատուցմանը,
- բժշկական զննությունների անցկացման ընթացակարգերին,
- աշխատանքից ազատվելու դեպքում վերջնահաշվարկի կատարման կարգին,
- աշխատանքից ազատման համար սահմանված ընթացակարգերին,
- արտաժամյա աշխատանքի համար սահմանված հավելումների հաշվարկմանը,
- Տեսչական մարմնի կանոնադրական գործառույթներից բխող աշխատանքային օրենսդրության այլ դրույթների կիրարկմանը,

- Covid-19 դեմ չպատվաստված և առանց թեստավորման աշխատանքի ներկայացող աշխատողներին աշխատանքի ներգրավելու կարգին:

Տնտեսավարողների/սպառողների կողմից պահանջված տեղեկատվությունը հիմնականում պայմանավորված է եղել Հայաստանի Հանրապետությունում գործող և տվյալ ոլորտները կանոնակարգող օրենսդրության պահանջների իրազեկված լինելու և վերջիններս ճիշտ կիրառելու, հավանական խախտումները բացառելու նպատակով:

Դեղերի շրջանառության ոլորտ

Տեսչական մարմնի կողմից իրականացվել են **68** խորհրդատվական աշխատանքներ՝ «Դեղերի մասին» ՀՀ օրենքի և 2019 թվականի օգոստոսի 15-ի, «Դեղատոմսեր գրելու, դեղեր բաց թողնելու (ներառյալ՝ էլեկտրոնային եղանակով) կարգը, դեղատոմսերի ձևերը, ինչպես

նաև դեղերի և դեղանյութերի հաշվառման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի նոյեմբերի 9-ի N 1402-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1080-Ն որոշման շրջանակներում դեղերի գրանցման, ներմուծման, մեծածախ և մանրածախ իրացման, դեղերի առաքմանը ներկայացվող տեխնիկական և մասնագիտական պահանջների հետ կապված դրույթներին, ինչպես նաև դեղատոմսով բաց թողնվող դեղերի և դեղատանը ժամկետնանց դեղը պահպանելու վերաբերյալ:

Բժշկական օգնության և սպասարկման ոլորտ

Տեսչական մարմնի կողմից իրականացվել են **72** խորհրդատվական աշխատանքներ՝ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի, ՀՀ առողջապահության նախարարի 2013 թվականի հուլիսի 3-ի «Հայաստանի Հանրապետությունում կիրառվող մի շարք բժշկական փաստաթղթերի ձևերը հաստատելու մասին թիվ 35-Ն հրամանի և «Ախտաբանաանատոմիական հերձումների անցկացման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2000թ-ի նոյեմբերի 6-ի N 715 որոշման շրջանակներում՝ բժշկական փաստաթղթերի լրացման և վարման կարգի պահանջների, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունում կիրառվող բժշկական փաստաթղթերը ՀՀ օրենսդրությամբ հաստատված ձևերին համապատասխանության վերաբերյալ:

Զանգերի ընդհանուր ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ հաշվետու ժամանակահատվածում քաղաքացիների հարցերը մեծ մասամբ վերաբերել են Առողջապահության նախարարի 17-Ն հրամանում կատարված փոփոխություններին: Մասնավորապես, հաշվետու ժամանակահատվածում քաղաքացիները հետաքրքրվել են ԱՆ 84-Ն հրամանով պայմանավորված ՊՇՌ հետազոտություն անցնելու համար սահմանված նորմերի մասին, մասնավորապես՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքի նախագծի, որով գործատուին հնարավորություն է տրվել «Քովիդ-19»-ի դեմ պատվաստման կամ ՊՇՌ հետազոտության սերտիֆիկատ չներկայացնող աշխատակցին չթույլատրել գտնվել աշխատավայրում, կատարել աշխատանքային

☏ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107
ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129

պարտականությունները, աշխատանքային պարտականություններ չկատարելու հիմքով էլ ընդհուպ լուծարել աշխատանքային պայմանագիրը:

Քաղաքացիների զանգերի մի մասը վերաբերել է «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 20.1-ին հոդվածի 3-րդ մասի, 22-րդ հոդվածի 3-րդ պարբերության և ՀՀ առողջապահության նախարարի 2021 թվականի օգոստոսի 20-ի N 65-Ն հրամանի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելուն:

Շարունակել են հարցեր հղել նաև ՊՇՌ հետազոտության օրերի հաշվարկի վերաբերյալ, մասնավորապես՝ թեստի հանձնմա՞ն օրվանից է հաշվվում հաջորդ թեստավորման ժամկետը, թե՞ ստացման: Զանգեր են եղել կորոնավիրուսային հիվանդությամբ հիվանդացած աշխատողների՝ ՊՇՌ հետազոտության դրական արդյունքի առկայության դեպքում 90-օրյա հաշվարկի վերաբերյալ: Քաղաքացիներին հետաքրքրել է պատվաստում և/կամ ՊՇՌ հետազոտություն իրականացնելուց հրաժարվելու դեպքում ինչպիսի՞ պատասխանատվության միջոցներ են կիրառվելու, ինչքա՞ն է օրենքով սահմանված տույժ-տուգանքի չափը, որո՞նք են գործատուի անելիքները: Շարունակվել են զանգերը նաև հեռավար աշխատանքի կազմակերպման, հղի աշխատակիցների, հեռավար աշխատանքի պայմաններում պատվաստման և/կամ ՊՇՌ հետազոտության սերտիֆիկատի պարտադիր պայմանի առկայության վերաբերյալ: Զանգերի մի մասը վերաբերել է քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատողների, ինչպես նաև հղիների պատվաստմանը: Հաշվետու ժամանակահատվածում քաղաքացիներից ահազանգեր են ստացվել հանրային տրանսպորտում, գրասենյակային փակ տարածքներում, սննդի սպասարկման կենտրոններում, մանրամեծածախ առևտրի կենտրոններում Covid-անվտանգության նորմերի չպահպանման վերաբերյալ, մասնավորապես՝ դիմակների և ախտահանիչների բացակայությանը:

Հարցեր են եղել նաև դպրոցներում և մանկապարտեզներում ախտահանման և ջերմաչափման գրանցամատյանների վարման կարգի, ինչպես նաև ձմեռային սեզոնով պայմանավորված դպրոցներում սահմանված ջեռուցման նորմերի չպահպանման վերաբերյալ:

☏ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107
ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129

Զանգերի հաջորդ գերակշիռ մասը վերաբերել է աշխատանքային օրենսդրության ոլորտին, մասնավորապես՝ աշխատանքային պայմանագրի բացակայության պայմաններում վերջնահաշվարկի չվճարման դեպքերին, ինչպես նաև աշխատանքային պայմանագրի վաղաժամ լուծման, աշխատավարձի հաշվարկման, վերջնահաշվարկի չվճարման և/կամ ոչ լիարժեք հաշվարկման, հղիության և հետծննդյան արձակուրդի իրավունքի խախտման, երեխայի խնամքի արձակուրդում գտնվող կերակրողի աշխատանքային պայմանագրի լուծման, երեխայի խնամքի արձակուրդում գտնվողի նպաստի չվճարման դեպքերին և այլն:

Ստացվել են բողոքներ՝ հղիության նպաստի ոչ լիարժեք վճարման մասին, ինչպես նաև պարզաբանումներ են խնդրել կազմակերպության լուծարման կամ վերակազմակերպմամբ պայմանավորված հղիության արձակուրդում գտնվողի հաստիքի կրճատման, անաշխատունակության նպաստ ստանալու, ամենամյա արձակուրդի իրավունքի խոչընդոտման վերաբերյալ:

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107

«Թեժ գծով» բարձրացված բոլոր հարցերը ստացել են պատասխաններ: Մասնագիտական պարզաբանումների անհրաժեշտության դեպքերում՝ հեռախոսազանգերն ուղղորդվել են Տեսչական մարմնի համապատասխան վարչություններ և տարածքային ստորաբաժանումներ:



Տեսչական մարմնի «Թեժ գիծ» ծառայությունը 2021 թվականին ստացել է 4411 զանգ՝ 2020-ի համեմատ (2500) 76,4% ավելի, այդ թվում.

- դեղերի շրջանառության ոլորտ՝ 68,

- բժշկական օգնության և սպասարկման ոլորտ՝ 71,

-բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ոլորտում՝ 1669, որից 1422՝ կորոնավիրուսային համավարակով պայմանավորված,

-աշխատանքային իրավունքի՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտում՝ 1306,

- ՖԲ հարցում՝ 207,

- առաջարկ՝ 15,

☏ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107
ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129

- տեղեկատվություն՝ 613,
- Տեսչական մարմնի գործառույթից դուրս՝ 462:

VI. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ, ԴՐԱՆՑ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ՍՏԱՑՎԱԾ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվետու ժամանակահատվածում Տեսչական մարմնի կողմից իրականացվել են կանխարգելիչ միջոցառումներ՝ իրազեկման, խորհրդատվության միջոցով, ինչպես նաև իրականացվել են ստուգայցեր՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 04-ի թիվ 17-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելման նպատակով կիրառվող» N 3.1.2-001-20 սանիտարական կանոնների, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2020 թվականի սեպտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելման նպատակով հանրակրթական (բացառությամբ՝ նախադպրոցական) ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում կիրառվող ՍԿ N 3.1.2-004-20 սանիտարական կանոնները հաստատելու մասին» թիվ 24-Ն հրամանի և ՀՀ առողջապահության նախարարի 2020 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 23-Ն հրամանով հաստատված «Անհատական պաշտպանության միջոցների ցանկը, կիրառման դեպքերն ու կարգը» սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների պահանջների պահպանումը պարզելու նպատակով:

Տեսչական մարմնի կողմից իրականացվել են **ստուգայցեր** թվով **54147** տնտեսավարող սուբյեկտներում (հյուրանոցներում, առողջարաններում, դեղատներում, պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններում, մասնավորապես՝ ոստիկանություն, անձնագրային բաժին, քաղաքապետարան, զինկոմիսարիատ, միասնական սոցիալական ծառայություն, ինչպես նաև բանկեր, առևտրի

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107

կազմակերպություններ, գրասենյակներ և այլն): Ստուգայցերի մի մասն իրականացվել է ոստիկանության և գործընկեր տեսչական մարմինների հետ համատեղ ուժերով՝ կրթական հաստատություններ, ուղևորափոխադրող տրանսպորտային ընկերություններ:

Ստուգայցերի ընթացքում կատարվել են նաև խորհրդատվական և իրազեկման աշխատանքներ: Ստուգայցերի ընթացքում բացահայտված խախտումների քանակը՝ 6103, նշանակված նախազգուշացումների քանակը՝ 754-ը, տուգանվել են 701 տնտեսավարող սուբյեկտներ, ընդհանուր առմամբ սահմանվել է 30.850.000 ՀՀ դրամի տուգանք:

Տնտեսավարող սուբյեկտի կողմից առավել հաճախ կատարվող օրենսդրության խախտումները կամ շեղումները դրանց պատճառները և տարածվածությունը Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի «Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելման նպատակով կիրառվող ՍԿ-Ն 3.1.2-001-20 սանիտարական կանոնները հաստատելու մասին» թիվ 17-Ն և 2020 թվականի սեպտեմբերի 11-ի «Անհատական պաշտպանության միջոցների ցանկը, կիրառման դեպքերն ու կարգը, սանիտարահամաճարակային անվտանգության կանոնները հաստատելու մասին» թիվ 23-Ն հրամանների պահանջների չպահպանելն է՝ հաճախորդների դիմակներ չկրելը և ոչ ճիշտ ձևաչափով գրանցամատյանների լրացնելը, ՊՇՌ թեստավորումների և COVID-19-ի դեմ պատվաստումների բացակայությունները:

Այսպիսով, Տեսչական մարմնի կողմից իրականացվել են **61178** կանխարգելիչ միջոցառումներ, այդ թվում՝ 54147 ստուգայցեր, 508 իրազեկման աշխատանքներ տնտեսավարող սուբյեկտների շրջանում և հանրության համար, որից 132 ոլորտային իրազեկումներից զատ կատարված այլ աշխատանքներ, 6523 խորհրդատվական գործունեություն, որից 2112՝ տնտեսավարող սուբյեկտներին տրված խորհրդատվություն, 4411՝ «Թեժ գծով» ստացված զանգերի թիվը, որից 207՝ ՖԲ հարցում: Այդ թվում.

- **Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ոլորտում՝** 35113 կանխարգելիչ միջոցառումներ, այդ թվում՝
  - 281 իրազեկում, որից 249՝ կորոնավիրուսային վարակով պայմանավորված,

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107

- 3703 խորհրդատվություն, որից 2034 տնտեսավարող սուբյեկտներին տրված խորհրդատվություն, 1669-ը թեժ գծով ստացված զանգերի թիվը,
- 31129 ստուգայցեր:

- **Աշխատանքային իրավունքի՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտում՝** 17985 կանխարգելիչ միջոցառումներ, այդ թվում՝
  - 70 իրազեկում,
  - 1383 խորհրդատվություն, որից 77 տնտեսավարող սուբյեկտներին տրված խորհրդատվություն, 1306-ը թեժ գծով ստացված զանգերի թիվը,
  - 16532 ստուգայցեր:
- **Դեղերի շրջանառության ոլորտում՝** 5583 կանխարգելիչ միջոցառումներ, այդ թվում՝
  - 15 իրազեկում,
  - 68 խորհրդատվություն՝ թեժ գծով ստացվող զանգերի պատասխաններ,
  - 5500 ստուգայցեր:
- **Բժշկական օգնության և սպասարկման ոլորտում՝** 1068 կանխարգելիչ միջոցառումներ, այդ թվում՝
  - 10 իրազեկում,
  - 72 խորհրդատվություն՝ թեժ գծով ստացվող զանգերի պատասխաններ,

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107

- 986 ստուգայցեր:



Տեսչական մարմնի սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետերի կողմից իրականացված կանխարգելիչ աշխատանքների վերաբերյալ

Տեսչական մարմնի «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի, Մեղրիի, Բավրայի, «Շիրակ» օդանավակայանի, Բագրատաշենի, Այրում-Ջիլիզայի և Գոգավան-Պրիվոլնոյեի սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետերում (այսուհետ՝ ՍԲՀԿ) հերթափոխային եղանակով ապահովվել է 24 ժամյա ուժեղացված ռեժիմով աշխատանքը՝ պայմանավորված COVID-19 վարակի պանդեմիայով և իրականացվել են կանխարգելիչ միջոցառումներ, այդ թվում.

- ՍԲՀԿ-ի հերթափոխների կազմն ու աշխատակիցների քանակը պարբերաբար փոփոխվել է՝ պայմանավորված այլ ՍԲՀԿ-երից գործուղված աշխատակիցների, սպասվող չվերթների և ուղևորների քանակով, Տեսչական մարմնի ղեկավարի հրամաններով ու ցուցումներով,

- ՍԲՀԿ-ն տեղեկատվական էլեկտրոնային կայքերի միջոցով մշտապես հետևել է այլ երկրներում համաճարակաբանական իրավիճակին և վարակների հնարավոր տարածման

ուղիներին: Առավել մեծ ուշադրություն է դարձվել կորոնավիրուսի COVID-19 շտամով պայմանավորված վարակին,

- Ըստ ՍԲՀԿ-ի տրված տեղեկատվության, 2021 թվականի հսկողություն է իրականացվել տարբեր երկրներից ժամանած 9167 չվերթով, 201679 ավտոտրանսպորտային միջոցներով և 1767 գնացքներով ժամանած 1 574 756 ուղևորների և անձնակազմի նկատմամբ, այդ թվում 42963 0-14 տարեկան: Բոլոր ուղևորների, օդանավերի և գնացքների անձնակազմերի անդամների հեռահար ջերմաչափում, անհրաժեշտության դեպքում՝ կրկնակի ջերմաչափում, հարցում առողջական վիճակի վերաբերյալ, անամնեստիկ տվյալների հավաքում, տրամադրվել է անհրաժեշտ խորհրդատվություն:

- Հայտնաբերված 70 ջերմող ուղևորները սահմանված կարգով հոսպիտալացվել են:

- Բոլոր ուղևորների մոտ ստուգվել են կորոնավիրուսի նկատմամբ թեսթերի առկայությունը: Դրանք առկա էին 709 410 ուղևորի մոտ,

- Տեղում թեստավորված 371545 ուղևորին, գնացքի և օդանավի անձնակազմի անդամներին տրամադրվել են ծանուցագրեր և ինքնամեկուսացման կանոնների վերաբերյալ տեղեկաթերթիկներ:

- 2021 թվականի հուլիսի 01-ից պոլիմերազային շղթայական ռեակցիայի հետազոտությունից հրաժարված անձանց թիվը կազմել է 7771,

- պատվաստման սերտեֆիկատներ առկա էին 265 758 ուղևորի մոտ,

- Յուրաքանչյուր հերթափոխից հետո տվյալ հերթափոխի ընթացքում ժամանած ուղևորների մասին տեղեկությունները օպերատիվ կերպով փոխանցվել են Տեսչական մարմնի կենտրոնական ապարատ, շաբաթական պարբերականությամբ՝ ՀՀ վարչապետի աշխատակազմ, ինչպես նաև անհրաժեշտ տեղեկությունները տրամադրվել են ՀՀ ոստիկանության «Զվարթնոց» օդանավակայանի գծային բաժին:

- Տեսչական մարմնի «Շիրակ» օդանավակայանի սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետը, երկամսյա դադարից հետո, վերսկսել է աշխատանքը 2021 թվականի հոկտեմբերի 1-ից՝ Գյումրիի օդանավակայանի վերագործարկման և կանոնավոր չվերթների իրականացմանը զուգահեռ:

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107

VII. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Տեսչական մարմնի 2021 թվականի ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված էր իրականացնել 266 թեմատիկ ստուգում 241 տնտեսավարող սուբյեկտների մոտ (ըստ չորս բնագավառների/ոլորտների), որոնցից՝ 186 բարձր ռիսկայնությամբ, 67 միջին և 13 ցածր ռիսկայնությամբ:

2021 թվականին հրապարակվել է 250 հանձնարարագիր ստուգում և վերստուգում (կարգադրագրի պահանջի կատարման հիմքով) իրականացնելու նպատակով, այդ թվում.

- 196 հանձնարարագիր (214 ստուգում իրականացնելու նպատակով, այդ թվում 35 համատեղ) 2021 թվականի ստուգումների տարեկան ծրագրով,
- 24 հանձնարարագիր 2020 թվականին հրապարակված հանձնարարագրի հիման վրա կատարված ստուգման արդյունքում վերստուգում իրականացնելու նպատակով,
- 30 հանձնարարագիր 2021 թվականին հրապարակված հանձնարարագրի հիման վրա կատարված ստուգման արդյունքում վերստուգում իրականացնելու նպատակով:

2021 թվականի հաշվետու տարում իրականացվել է 303 ստուգում (ստուգում և վերստուգում), որից ավարտվել է 270 (ակտ՝ 131, տեղեկանք՝ 124, ուժը կորցրած ճանաչված հանձնարարագիր՝ 9, զեկուցագիր՝ 5, խոչընդոտում՝ 1) ստուգում, իսկ 33 ստուգում հաշվետու ժամանակահատվածի ավարտի դրությամբ ընթացքի մեջ էր: Ստուգման արդյունքում հաշվետու ժամանակահատվածում տրվել է 127 կարգադրագիր՝ խախտումների և թերությունների վերացման մասին: Այդ թվում ըստ ոլորտների.

- **դեղերի շրջանառության ոլորտ**

2021 նախատեսված է 121 թեմատիկ ստուգում: 2021 թվականին հրապարակվել է 119 (2021թ. տարեկան ծրագիր՝ 107, 2021թ. վերստուգում՝ 8, 2020թ. վերստուգում՝ 4) հանձնարարագիր: 2021 թվականին ավարտվել է 119 (2020 թ. հրապարակված՝ 18, 2021 թ. հրապարակված՝ 101) թեմատիկ ստուգում, որից 21-ը ստուգման ակտ, այդ թվում 22 կարգադրագիր խախտումների և թերությունների վերացման մասին, 86-ը տեղեկանք, 8-ը

☏ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107
ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129

ուժը կորցրած ճանաչվել, 2 զեկուցագիր և 1 խոչընդոտում, ընթացքի մեջ է 21 թեմատիկ ստուգում:

- **բժշկական օգնության և սպասարկման ոլորտ**

2021 նախատեսված է 49 թեմատիկ ստուգում: 2021 թվականին հրապարակվել է 63 (2021թ. տարեկան ծրագիր՝ 41, 2021թ. վերստուգում՝ 11, 2020թ. վերստուգում՝ 11) հանձնարարագիր: 2021 թվականին ավարտվել է 68 (2020 թ. հրապարակված՝ 13, 2021 թ. հրապարակված՝ 55) թեմատիկ ստուգում, որից 55-ը ստուգման ակտ, այդ թվում 54 կարգադրագիր խախտումների և թերությունների վերացման մասին, 12-ը տեղեկանք, 1-ը ուժը կորցրած ճանաչվել, ընթացքի մեջ է 8 թեմատիկ ստուգում:

- **բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ոլորտ**

2021 նախատեսված է 48 թեմատիկ ստուգում: 2021 թվականին հրապարակվել է 61 (2021թ. տարեկան ծրագիր՝ 37, 2021թ. վերստուգում՝ 13, 2020թ. վերստուգում՝ 11) հանձնարարագիր: 2021 թվականին ավարտվել է 70 (2020 թ. հրապարակված՝ 13, 2021 թ. հրապարակված՝ 57) թեմատիկ ստուգում, որից 47-ը ստուգման ակտ, այդ թվում 46 կարգադրագիր խախտումների և թերությունների վերացման մասին, 20-ը տեղեկանք, 3 զեկուցագիր, ընթացքի մեջ է 7 թեմատիկ ստուգում:

- **աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտում՝**

2021 նախատեսված է 48 թեմատիկ ստուգում: 2021 թվականին հրապարակվել է 36 (2021թ. տարեկան ծրագիր՝ 29, 2021թ. վերստուգում՝ 5, 2020թ. վերստուգում՝ 2) հանձնարարագիր: 2021 թվականին ավարտվել է 41 (2020 թ. հրապարակված՝ 7, 2021 թ. հրապարակված՝ 34) թեմատիկ ստուգում, որից 30-ը ստուգման ակտ, այդ թվում 28 կարգադրագիր խախտումների և թերությունների վերացման մասին, 11-ը տեղեկանք, ընթացքի մեջ է 2 թեմատիկ ստուգում:

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107

Թեմատիկ ստուգումների և վերստուգումների ամփոփ տվյալներ

Աղյուսակ 1

Տեսչական մարմնում իրականացված (ներառյալ ընթացքի մեջ) ստուգումների քանակը						
Հ/Հ		2020թ. ստուգումների տարեկան ծրագիր (ավարտվել է 2021թ.)	2021թ. ստուգումների տարեկան ծրագիր	2020թ. վերստուգում (իրականացվել է 2021թ.)	2021թ. վերստուգում (իրականացվել է 2021թ.)	ընդամենը 2021թ. իրականացված ստուգումներ/ վերստուգումներ
1	բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ոլորտ	12	20	7	6	45
2	բժշկական օգնության և սպասարկման ոլորտ	13	41	11	11	76
3	դեղերի շրջանառության ոլորտ	21	106	4	8	139
4	աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ոլորտ	7	29	2	5	43
	ԸՆԴԱՄԵՆԸ	53	196	24	30	303

Աղյուսակ 2

Տեսչական մարմնի կողմից ստուգումների արդյունքում կիռարված տուգանքների քանակն՝ ըստ վերահսկողական ոլորտների			
Հ/Հ	Ոլորտ	2021թ. տուգանքներ	Նշանակված տուգանքների չափը
1	բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ոլորտ	52	1,760,000
2	բժշկական օգնության և սպասարկման ոլորտ	504	16,050,000
3	դեղերի շրջանառության ոլորտ	11	128,268,400
4	աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ոլորտ	26	1,930,000
	ԸՆԴԱՄԵՆԸ	593	148,008,400

Այսպես, 2021 թվականի ընթացքում իրականացված ստուգումների արդյունքների վերլուծությունից և Ծրագրում արտացոլված տեղեկատվության համադրումից պարզվել է, որ.

- **բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ոլորտում**

Հրապարակվել է 77 (2021թ. ստուգումների տարեկան ծրագիր՝ 37, 2020թ. ստուգումների տարեկան ծրագիր՝ 16, 2021թ. ստուգման վերստուգում՝ 13, 2020թ. ստուգման

վերստուգում՝ 11) հանձնարարագիր: Նշված 77 հանձնարարագրի հիման վրա իրականացված ստուգման արդյունքում կազմվել է՝ 47 (2021թ. ստուգումների տարեկան ծրագիր՝ 28, 2020թ. ստուգումների տարեկան ծրագիր՝ 13, 2021թ. ստուգման վերստուգում՝ 3, 2020թ. ստուգման վերստուգում՝ 3) ակտ և 15 (2021թ. ստուգումների տարեկան ծրագիր՝ 9, 2021թ. ստուգման վերստուգում՝ 2, 2020թ. ստուգման վերստուգում՝ 4) տեղեկանք, որը կազմում է ավարտված ստուգման **37,5%-ը**: Տրվել է՝ 46 (2021թ. ստուգումների տարեկան ծրագիր՝ 28, 2020թ. ստուգումների տարեկան ծրագիր՝ 13, 2021թ. ստուգման վերստուգում՝ 3, 2020թ. ստուգման վերստուգում՝ 2) կարգադրագիր խախտումները վերացնելու համար:

- **բժշկական օգնության և սպասարկման ոլորտում**

Հրապարակվել է 76 (2021թ. ստուգումների տարեկան ծրագիր՝ 41, 2020թ. ստուգումների տարեկան ծրագիր՝ 13, 2021թ. ստուգման վերստուգում՝ 11, 2020թ. ստուգման վերստուգում՝ 11) հանձնարարագիր: Նշված 76 հանձնարարագրի հիման վրա իրականացված ստուգման արդյունքում կազմվել է՝ 55 (2021թ. ստուգումների տարեկան ծրագիր՝ 38, 2020թ. ստուգումների տարեկան ծրագիր՝ 13, 2021թ. ստուգման վերստուգում՝ 2, 2020թ. ստուգման վերստուգում՝ 2) ակտ և 12 (2021թ. ստուգումների տարեկան ծրագիր՝ 1, 2021թ. ստուգման վերստուգում՝ 5, 2020թ. ստուգման վերստուգում՝ 6) տեղեկանք, որը կազմում է ավարտված ստուգման **17,9%-ը**: Տրվել է՝ 54 (2021թ. ստուգումների տարեկան ծրագիր՝ 38, 2020թ. ստուգումների տարեկան ծրագիր՝ 13, 2021թ. ստուգման վերստուգում՝ 1, 2020թ. ստուգման վերստուգում՝ 2) կարգադրագիր խախտումները վերացնելու համար:

- **դեղերի շրջանառության ոլորտում**

Հրապարակվել է 140 (2021թ. ստուգումների տարեկան ծրագիր՝ 107, 2020թ. ստուգումների տարեկան ծրագիր՝ 21, 2021թ. ստուգման վերստուգում՝ 8, 2020թ. ստուգման վերստուգում՝ 4) հանձնարարագիր: Նշված 140 հանձնարարագրի հիման վրա իրականացված ստուգման արդյունքում կազմվել է՝ 22 (2021թ. ստուգումների տարեկան ծրագիր՝ 20, 2020թ. ստուգումների տարեկան ծրագիր՝ 1, 2021թ. ստուգման վերստուգում՝ 1) ակտ և 86 (2021թ. ստուգումների տարեկանծրագիր՝ 58, 2020թ. ստուգումների տարեկան ծրագիր՝ 17, 2021թ. ստուգման վերստուգում՝ 7, 2020թ. ստուգման վերստուգում՝ 4) տեղեկանք, որը կազմում է ավարտված ստուգման **79,6%-ը**: Տրվել է՝ 22 (2021թ.

ստուգումների տարեկան ծրագիր՝ 20, 2020թ. ստուգումների տարեկան ծրագիր՝ 1, 2021թ. ստուգման վերստուգում՝ 1) կարգադրագիր խախտումները վերացնելու համար:

- **աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտում**

Հրապարակվել է 43 (2021թ. ստուգումների տարեկան ծրագիր՝ 29, 2020թ. ստուգումների տարեկան ծրագիր՝ 7, 2021թ. ստուգման վերստուգում՝ 5, 2020թ. ստուգման վերստուգում՝ 2) հանձնարարագիր: Նշված 43 հանձնարարագրի հիման վրա իրականացված ստուգման արդյունքում կազմվել է՝ 30 (2021թ. ստուգումների տարեկան ծրագիր՝ 24, 2020թ. ստուգումների տարեկան ծրագիր՝ 6) և 11 (2021թ. ստուգումների տարեկան ծրագիր՝ 4, 2020թ. ստուգումների տարեկան ծրագիր՝ 1, 2021թ. ստուգման վերստուգում՝ 4, 2020թ. ստուգման վերստուգում՝ 2) տեղեկանք, որը կազմում է ավարտված ստուգման 26,8%-ը: Տրվել է՝ 28 (2021թ. ստուգումների տարեկան ծրագիր՝ 22, 2020թ. ստուգումների տարեկան ծրագիր՝ 6) կարգադրագիր խախտումները վերացնելու համար:

Տեսչական մարմնի կողմից 2021 թվականին իրականացված թեմատիկ ստուգման արդյունքները, որպես վիճակագրական տեղեկատվություն կարող են օգտագործվել 2022 թվականին նույնաբովանդակ տվյալների (2022 թվականին իրականացված ստուգման) համադրման և վերլուծության համար:

2021 թվականին իրականացված ստուգման ցուցանիշների համեմատական 2020 թվականին իրականացված ստուգման ցուցանիշների համեմատ

- Ավարտված ստուգումների համեմատական

☏ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107
ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129



➢ Տեսչական մարմնի կողմից նշանակված տուգանքների դիմաց գանձված տուգանքների համեմատական



Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ դեռևս ոչ բոլոր ստուգաթերթերն են հաստատված (վերջիններս ընթացքի մեջ են), 2021 թվականի Ծրագրում նախատեսված 241 տնտեսավարող սուբյեկտներից Տեսչական մարմնի ղեկավարի կողմից 2021 թվականին հրապարակվել են հանձնարարագրեր 196

տնտեսավարող սուբյեկտներում թեմատիկ ստուգում իրականացնելու նպատակով, որը կազմում է նախատեսված ստուգման 81,33 %-ը:

Վերլուծելով, 2021 թվականին իրականացվելիք ստուգումների ծրագրով նախատեսված և ստուգաթերթերի առկայության փաստը, ինչպես նաև օրենքով սահմանված այլ սահմանափակումները (մասնավորապես, ոչ ավել, քան տարին 1 անգամ) ստացվում է, որ Տեսչական մարմինը հնարավորություն է ունեցել հրապարակել հանձնարարագիր 196 տնտեսավարող սուբյեկտների մոտ, որի մասով էլ հրապարակվել է 196 հանձնարարագիր, որը կազմում է ընդհանուրի 100%-ը:

2021 թվականին իրականացվել են 2020 թվականին հրապարակված հանձնարարագրի շրջանակներում սկսված և 2021 թվականին ավարտված ստուգումներ, ինչպես նաև իրականացվել են վերստուգումներ, ուստի պլանային 241 ցուցանիշի համեմատ 2021 թվականին իրականացվել է 270 (2021թ. ստուգում՝ 173, 2020թ. ստուգում՝ 53, 2020թ. վերստուգում՝ 21, 2021թ. վերստուգում՝ 23) ստուգում, որը կազմում է պլանային ստուգման 112%-ը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 270 ստուգումից բացի իրականացվել են 33 ստուգում, որոնք ընթացքի մեջ են՝ Տեսչական մարմինը 2021 թվականին պլանավորված ստուգման մասով ունեցել է 25,7% [125,7 % (303 ((270+33) : 241 x 100) - 100%] գերակատարում:

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ԴՐԱՆՔ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Տեսչական մարմինը 2021 թվականի ընթացքում ստացել է **654** դիմումներ և բողոքներ, որոնցից օրենքով սահմանված կարգով **32** վերադարձվել է, **88** վերահասցեագրվել է, **151**-ին տրվել են համապատասխան պարզաբանումներ: Քաղաքացիներից ստացված շուրջ 390 դիմումների հիման վրա իրականացվել է վարչական վարույթներ, որոնցով կազմակերպվել են վարչական լսումներ: Այսպես, ըստ ոլորտների.

☏ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107
ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129



Օրենքով սահմանված կարգով հաշվետու տարում Տեսչական մարմնի կողմից ընդամենը հարուցվել է **1462 վարչական վարույթ,** այդ թվում Տեսչական մարմնի նախաձեռնությամբ (ՀՀ իրավապահ մարմիններից, ՀՀ պետական այլ մարմիններից ստացված գրությունների, ահազանգերի և այլ հիմքերով)՝ **1072,** դիմումի հիման վրա՝ **390**: Կարգադրագրով տրված առաջադրանքների կատարումը պարզելու նպատակով հարուցված վարչական վարույթների թիվը՝ 238:

Աղյուսակ 3-ում ներկայացված են 2021 թվականի ընթացքում Տեսչական մարմնի կողմից հարուցված վարչական վարույթների քանակը՝ 2019-2020թթ. համեմատությամբ և ըստ Տեսչական մարմնի վերահսկողական ոլորտների: Համաձայն այդ տվյալների 2021 թվականին հարուցված վարչական վարույթների թիվը 2020 թվականի համեմատությամբ աճել է 37,8%, իսկ 2019 թվականի համեմատությամբ՝ 14,3% նվազել:

(374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107
ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129

Աղյուսակ 3				
Տեսչական մարմնի կողմից հարուցված վարչական վարույթների քանակը				
Հ/Հ		2019 թվական	2020 թվական	2021 թվական
1	բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ոլորտ	1069	292	424
2	բժշկական օգնության և սպասարկման ոլորտ	309	187	228
3	դեղերի շրջանառության ոլորտ	271	283	277
4	աշխատանքային իրավունքի՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ոլորտ	25	149	533
	ԸՆԴԱՄԵՆԸ	1674	911	1462



Խախտումները վերացնելու համար տրվել է 453 կարգադրագիր՝ առաջադրանք տալու վերաբերյալ, խախտման բացակայության հիմքով՝ 921 վարույթ կարճվել է, այդ թվում 117՝ դիմումից հրաժարվելու հիմքով: Վարչական վարույթների արդյունքում տնտեսավարող սուբյեկտների և դրանց ծառայողների նկատմամբ որպես պատասխանատվության

☏ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107
ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129

միջոցներ կիրառվել են նախազգուշացումներ և տուգանքներ, ընդունվել է 450 որոշում տույժ նշանակելու մասին, ընդհանուր առմամբ սահմանվել է 66,087,635 ՀՀ դրամի տուգանք:

Այսպես, ըստ ոլորտների.

Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ոլորտ

Տեսչական մարմնի կողմից օրենքով սահմանված կարգով հարուցվել է 424 վարչական վարույթ (Տեսչական մարմնի նախաձեռնությամբ 317, դիմումի հիման վրա՝ 107): Կարգադրագրով տրված առաջադրանքների կատարումը պարզելու նպատակով հարուցված վարչական վարույթների թիվը՝ 115: Խախտումները վերացնելու համար տրվել է 162 կարգադրագիր՝ առաջադրանք տալու վերաբերյալ, 283 վարչական վարույթ կարճվել է, այդ թվում 19՝ դիմումից հրաժարվելու հիմքով: Վարչական վարույթների արդյունքում ընդունվել է 156 որոշում տուգանք նշանակելու մասին և սահմանվել է 8,458,134 ՀՀ դրամի տուգանք:

Աշխատանքային իրավունքի՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտ

Տեսչական մարմնի կողմից օրենքով սահմանված կարգով հարուցվել է 533 վարչական վարույթ (Տեսչական մարմնի նախաձեռնությամբ 256, դիմումի հիման վրա՝ 277): Կարգադրագրով տրված առաջադրանքների կատարումը պարզելու նպատակով հարուցված վարչական վարույթների թիվը՝ 20: Հարուցված վարչական վարույթներից՝ խախտումները վերացնելու համար տրվել է 113 կարգադրագիր՝ առաջադրանք տալու վերաբերյալ, խախտման բացակայության հիմքով՝ 347 վարույթ կարճվել է, այդ թվում 98՝ դիմումի հիմքով: Վարչական վարույթների արդյունքում ընդունվել է 190 որոշում տուգանք նշանակելու մասին և սահմանվել է 29,374,501 ՀՀ դրամի տուգանք:

Դեղերի շրջանառության ոլորտ

Տեսչական մարմնի կողմից օրենքով սահմանված կարգով հարուցվել է 277 վարչական վարույթ (Տեսչական մարմնի նախաձեռնությամբ 275, դիմումի հիման վրա՝ 2): Կարգադրագրով տրված առաջադրանքների կատարումը պարզելու նպատակով հարուցված վարչական վարույթների թիվը՝ 70: Խախտումները վերացնելու համար տրվել է

122 կարգադրագիր՝ առաջադրանք տալու վերաբերյալ, խախտման բացակայության հիմքով 155 վարույթ կարճվել է: Վարչական վարույթների արդյունքում ընդունվել է 55 որոշում տուգանք նշանակելու մասին և սահմանվել է 23,335,000 ՀՀ դրամի տուգանք:

Բժշկական օգնության և սպասարկման ոլորտ

Տեսչական մարմնի կողմից օրենքով սահմանված կարգով հարուցվել է 228 վարչական վարույթ (Տեսչական մարմնի նախաձեռնությամբ 224, դիմումի հիման վրա՝ 4): Կարգադրագրով տրված առաջադրանքների կատարումը պարզելու նպատակով հարուցված վարչական վարույթների թիվը՝ 33: Խախտումները վերացնելու համար տրվել է 56 կարգադրագիր՝ առաջադրանք տալու վերաբերյալ, խախտման բացակայության հիմքով 136 վարույթ կարճվել է: Վարչական վարույթների արդյունքում ընդունվել է 49 որոշում տուգանք նշանակելու մասին և սահմանվել է 4,920,000 ՀՀ դրամի տուգանք:



VIII. ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՎԵԼ ՀԱՃԱԽ ԿԱՏԱՐՎՈՂ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ԿԱՄ ՇԵՂՈՒՄՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ՎԵՐ Է ՀԱՆԵԼ

☏ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107
ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129

ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Տեսչական մարմնի կողմից հաշվետու ժամանակահատվածում իրականացվող գործունեության արդյունքում պարզվել է, որ տնտեսավարող սուբյեկտների կողմից առավել հաճախ կատարվող խախտումները պայմանավորված են մինչ այդ Տեսչական մարմնի կողմից վերահսկողության չորս ոլորտներում պատշաճ վերահսկողության բացակայությամբ, ինչպես նաև օրենսդրության պահանջների չիմացությամբ և ոչ բավարար իրազեկմամբ (մասնավորապես՝ COVID-19 համաճարակով պայմանավորված), և որոշ տնտեսավարող սուբյեկտների կողմից ոլորտները կանոնակարգող իրավական ակտերի պահանջների ոչ պատճաշ պահպանումն ու իրականացումը: Այդ թվում ըստ ոլորտների.

Դեղերի շրջանառության ոլորտում տնտեսավարող սուբյեկտների կողմից ըստ տարածվածության առավել հաճախ կատարվող օրենսդրության խախտումներն են՝

- «Դեղերի մասին » ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի, 28-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի,
- «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 7.3 մասի պահանջների պահպանումը,

Բժշկական օգնության և սպասարկման ոլորտում տնտեսավարող սուբյեկտների կողմից ըստ տարածվածության առավել հաճախ կատարվող օրենսդրության խախտումներն են՝

- ՀՀ առողջապահության նախարարի 2008 թվականի մարտի 4-ի թիվ 03-Ն հրամանով հաստատված «Բժշկական թափոնների գործածությանը ներկայացվող հիգիենիկ և հակահամաճարակային պահանջներ» N 2.1.3-3 սանիտարական կանոններ և նորմեր,
- ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 48-Ն հրամանով հաստատված «Բժշկական նշանակության արտադրատեսակների մաքրմանը, ախտահանմանը, նախամանրէազերծման մշակմանը և մանրէազերծմանը ներկայացվող պահանջներ» N 3.1.1-029-2015 սանիտարական կանոններ և հիգիենիկ նորմեր,

☏ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107
ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129

• «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին 6-րդ կետի,

• ՀՀ կառավարության 2002թ. դեկտեմբերի 5-ի «Պոլիկլինիկաների (խառը, մեծահասակների և մանկական), առանձին մասնագիտացված կաբինետների, ընտանեկան բժշկի գրասենյակների, բժշկական ամբուլատորիաների, գյուղական առողջության կենտրոնների, բուժակ-մանկաբարձական կետերի, կանանց կոնսուլտացիաների և հիվանդանոցային (մասնագիտացված) բժշկական օգնության ու սպասարկման համար անհրաժեշտ տեխնիկական և մասնագիտական որակավորման պահանջներն ու պայմանները հաստատելու մասին» N 1936-Ն որոշման պահանջների խախտումներ,

Հիմնական պատճառներից են բուժաշխատողների և տնտեսավարողների իրազեկվածության ցածր մակարդակը:

Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ոլորտում հաշվետու ժամանակահատվածում տնտեսավարող սուբյեկտների կողմից ըստ տարածվածության առավել հաճախ կատարվող օրենսդրության խախտումները կամ շեղումները՝

• Համայնքի ղեկավարների կողմից չի իրականացվում խմելու ջրի սպասարկման պատշաճ աշխատանքներ, որի արդյունքում խմելու ջրի նմուշներում հայտնաբերվում են շեղումներ:

• Դպրոցներում վառարանային ջեռուցում իրականացնելու և գործող նորմերով սահմանված ջերմային ռեժիմի խախտումներ:

• ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի «Բժշկական նշանակության իրերի մաքրմանը, ախտահանմանը, նախամանրէազերծմանը և մանրէազերծմանը ներկայացվող» N 48-Ն հրամանով հաստատված N 3.1.1-029-2015 սանիտարական կանոնների և հիգիենիկ նորմերի պահանջների վերաբերյալ,

• ՀՀ առողջապահության նախարարի 2008 թվականի մարտի 4-ի «Բժշկական թափոնների անվտանգ գործածությանը ներկայացվող հիգիենիկ և հակահամաճարակային պահանջներ» N 03-Ն հրամանով հաստատված N 2.1.3-3 սանիտարական կանոնների և հիգիենիկ նորմերի պահանջների վերաբերյալ,

☏ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107
ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129

• ՀՀ առողջապահության նախարարի 2020 թվականի սեպտեմբերի 11-ի «Անհատական պաշտպանության միջոցների ցանկը, կիրառման դեպքերն ու կարգը, սանիտարահամաճարակային անվտանգության կանոնները հաստատելու մասին» N 23-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և հիգիենիկ նորմերի պահանջների վերաբերյալ:

Աշխատանքային իրավունքի՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտում՝ տնտեսավարող սուբյեկտների կողմից ըստ տարածվածության առավել հաճախ կատարվող օրենսդրության խախտումները կապված են աշխատողներին աշխատանքի կոլեկտիվ և անհատական պաշպանության միջոցների տրամադրման և կիրառման, ինչպես նաև տվյալ ոլորտը կանոնակարգող այլ իրավական ակտերի պահանջների պահպանման հետ, այդ թվում.

• ՀՀ աշխատանքային օրենսգրքի 192-րդ հոդվածի պահանջները, այն է՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետում չի հաշվարկվել և չի վճարվել աշխատավարձ,

• ՀՀ աշխատանքային օրենսգրքի 244-րդ հոդվածի պահանջները,

• ՀՀ աշխատանքային օրենսգրքի 249-րդ հոդվածի պահանջները,

• ՀՀ աշխատանքային օրենսգիրքի 255-րդ հոդվածի պահանջները,

• ՀՀ աշխատանքային օրենսգիրքի 102-րդ հոդվածի պահանջները,

• ՀՀ առողջապահության նախարարի 2005թ. օգոստոսի 15-ի N 756-Ն հրամանի պահանջները,

• ՀՀ առողջապահության նախարարի 2012թ. սեպտեմբերի 19-ի N 15-Ն հրամանի պահանջները,

• ՀՀ կառավարության 2004թ. հունիսի 15-ի N 1089-Ն որոշման պահանջները,

• ՀՀ կառավարության 2004թ. նոյեմբերի 11-ի N 1631-Ն որոշման պահանջները:

• ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով աշխատողների հետ վարջնահաշվարկ կատարելու պահանջը,

• ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետում աշխատավարձ հաշվարկելու և վճարելու պահանջը,

☏ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107
ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129

• ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգին համապատասխան աշխատանքային պայմանագրերի լուծման պահանջը,

• ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված՝ աշխատանքի ընդունելիս աշխատողի հետ աշխատանքային պայմանագիր կնքելու կամ անհատական իրավական ակտ ընդունելու պահանջը:

IX. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Տեսչական մարմնի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարությանը և քաղաքականություն մշակող պետական մարմիններին (վերջիններիս առաջարկով, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ), ներկայացվել են 34 օրենսդրական փոփոխությունների առաջարկություններ և տրվել կարծիքներ: Այսպես.

1) «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու նախագծի վերաբերյալ,

2) ԱՊՀ երկրների և Մոնղոլիայի աշխատանքի տեսչությունների տարածաշրջանային դաշինքի 2021թ. գործունեության միջոցառումների նախագծի վերաբերյալ,

3) «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը, ընդունման հիմնավորումը և տեղեկանքները,

4) ««Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, հիմնավորումները,

5) ««Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը, հիմնավորումները,

6) Անկախ Պետությունների Համագործակցության գործադիր կոմիտեի կողմից ներկայացված մինչև 18 տարեկան աշխատողների արգելված աշխատանքների տիպային ցանկի նախագծի վերաբերյալ,

☏ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107
ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129

7) ՀՀ կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 5-ի «Պոլիկլինիկաների (խառը, մեծահասակների և մանկական), առանձին մասնագիտացված կաբինետների, ընտանեկան բժշկի գրասենյակների, բժշկական ամբուլատորիաների, գյուղական առողջության կենտրոնների, բուժակ-մանկաբարձական կետերի, կանանց կոնսուլտացիաների և հիվանդանոցային (մասնագիտացված) բժշկական օգնության ու սպասարկման համար անհրաժեշտ տեխնիկական և մասնագիտական որակավորման պահանջներն ու պայմանները հաստատելու մասին» N 1936-Ն որոշման նախագծի վերաբերյալ,

8) ՀՀ կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 29-ի «Ստոմատոլոգիական կենտրոնների, պոլիկլինիկաների եվ կաբինետների գործունեության համար անհրաժեշտ տեխնիկական և մասնագիտական որակավորման պահանջներն ու պայմանները հաստատելու և հայաստանի հանրապետության կառավարության 2002 թվականի հոկտեմբերի 17-ի N 1662-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1275-Ն որոշման նախագծի վերաբերյալ,

9) ՀՀ կառավարության 2008 թվականի մարտի 27-ի «Հայաստանի Հանրապետությունում իրականացվող բժշկական օգնության և սպասարկման տեսակների ցանկը սահմանելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ, ինչպես նաև «Բժշկական նշանակության արտադրանքների վերահսկողության» նախագծի վերաբերյալ, «Ախտաբանաանատոմիական, դիահերձման կարգի» նախագծի վերաբերյալ,

10) «Արյան դոնորների ընդհանուր ռեեստրի վարման կարգի» վերաբերյալ առաջարկությունները՝ քաղաքականություն մշակող պետական մարմիններ, Տեսչական բարեփոխումների գրասենյակ և ՀՀ վարչապետի աշխատակազմ,

11) Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 375-Ն որոշման մեջ փոփոխություններ և 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 1691-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին նախագծի վերաբերյալ,

12) «Համընդհանուր լաբորատոր ցանցի գործունեության սկզբունքները, համակարգումը, մակարդակները և վերահսկողության կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ,

13) «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջների պահպանումը,

14) 2020 թվականի օգոստոսի 4-ի թիվ 17-Ն Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելման նպատակով կիրառվող ՍԿ-Ն 3.1.2-001-20 սանիտարական կանոնները հաստատելու մասին և 2020 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 23-Ն անհատական պաշտպանության միջոցների ցանկը, կիրառման դեպքերն ու կարգը, սանիտարահամաճարակային անվտանգության կանոնները հաստատելու մասին հրամանների պահանջների չպահպանելը՝ հաճախորդների դիմակների չկրելը և ոչ ճիշտ ձևաչափով գրանցամատյանների լրացնելը,

15) Առաջարկություններ են ներկայացվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն Եվրոպայի Խորհրդի Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիայի հոդված 1-ի («Աշխատանքի իրավունք») 1 և 2 կետերի կատարման վերաբերյալ Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի 2020 թվականի եզրակացությունների առնչությամբ 2019 թվականից ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի լիազորությունների մասով տեղի ունեցած փոփոխությունների վերաբերյալ,

16) ՀՀ կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 5-ի «Պոլիկլինիկաների (խառը, մեծահասակների և մանկական), առանձին մասնագիտացված կաբինետների, ընտանեկան բժշկի գրասենյակների, բժշկական ամբուլատորիաների, գյուղական առողջության կենտրոնների, բուժակ-մանկաբարձական կետերի, կանանց կոնսուլտացիաների և հիվանդանոցային (մասնագիտացված) բժշկական օգնության ու սպասարկման համար անհրաժեշտ տեխնիկական և մասնագիտական որակավորման պահանջներն ու պայմանները հաստատելու մասին» N 1936-Ն որոշման նախագծի վերաբերյալ,

17) ««Ոչնչացում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող ապրանքների ոչնչացման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի դեկտեմբերի 31-ի թիվ 901 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ առաջարկությունները՝

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107

քաղաքականություն մշակող պետական մարմիններ, Տեսչական բարեփոխումների գրասենյակ և ՀՀ վարչապետի աշխատակազմ,

18) Վարչապետի աշխատակազմի Բաց կառավարման գործընկերություն - Հայաստան (ԲԿԳ) քարտուղարության մեկնարկած ԲԿԳ 5-րդ գործողությունների ծրագրի վերաբերյալ,

19) «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ,

20) ««Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» նախագծի վերաբերյալ,

21) ««Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ,

22) «Կենսանվտանգության և կենսապահովության մասին» ՀՀ օրենքի նախագծի նախնական տարբերակի վերաբերյալ

23) «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին նախագծի ներկայացում՝ ««Դեղերի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է դեղերի շրջանառության ոլորտում, մասնավորապես դեղերի պահպանման համար նախատեսված պահեստներում, գործնականում ոչ ճիշտ դեղերի պահպանումից: Ներկա պահին ՀՀ -ում գործում է Առողջապահության նախարարի 2010 թվականի սեպտեմբերի 10-ի «Դեղերի փոխադրման, պահեստավորման և պահպանման կարգը սահմանելու մասին» թիվ 17-Ն հրամանը, որի ընդունման համար հիմք է հանդիսացել 1998 թվականի «Դեղերի մասին» ՀՀ օրենքը: Կատարվող լրացումների արդյունքում ստեղծվում է հնարավորություն դեղերի փոխադրման, պահեստավորման և պահպանման նկատմամբ պատշաճ վերահսկողություն իրականացնելու,

Ներկայացվել է հաստատման.

☏ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129

1) «Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում իմունականխարգելման գործընթացի կազմակերպման և իրականացման նկատմամբ վերահսկողության» ստուգաթերթը,

2) «Վիրուսային հեպատիտներ Բ-ի և Ց-ի համակցված համաճարակաբանական հսկողության նկատմամբ վերահսկողության» ստուգաթերթը,

3) «Մանկաբարձագինեկոլոգիական ստացիոնարում (բաժանմունքում) ներհիվանդանոցային վարակի կանխարելման և հակահամաճարակային համալիր միջոցառումների կազմակերպման և իրականացման նկատմամբ վերահսկողության» ստուգաթերթը,

4) «Վիրուսային հեպատիտներ Բ-ի և Ց-ի համակցված համաճարակաբանական հսկողության նկատմամբ վերահսկողության» և «Մանկաբարձագինեկոլոգիական ստացիոնարում (բաժանմունքում) ներհիվանդանոցային վարակի կանխարելման և հակահամաճարակային համալիր միջոցառումների կազմակերպման և իրականացման նկատմամբ վերահսկողության» ստուգաթերթերը,

5) ՀՀ առողջապահության նախարարի 2010 թ. հուլիսի 16-ի N 13-Ն «Ախտահանման, կրծողասպան և հոդվածոտանիների ոչնչացման աշխատանքների իրականացման և աշխատողների առողջության պահպանման» ՍՆ 2.2.5-003-05 սանիտարական կանոներիի և հիգիենիկ նորմատիվների նկատմամբ վերահսկողություն» ստուգաթերթը,

6) «Ախտահանման, կրծողասպան եվ հոդվածոտանիների ոչնչացման աշխատանքների իրականացման եվ աշխատողների առողջության պահպանման» ՍՆ N 2.2.5-003-05 սանիտարական կանոններ եվ հիգիենիկ նորմատիվներ վերահսկողության ստուգաթերթը,

7) «Նախադպրոցական ոլորտի կազմակերպությունների, հիմնարկների, նախադպրոցական ուսումնական/կրթական կազմակերպությունների կառուցվածքի, պահպանման և աշխատանքների կազմակերպման ռեժիմի սանիտարահամաճարակային պահանջներ» սանիտարական կանոնների և նորմերի մշակման աշխատանքները,

8) «Մշակող արդյունաբերության ոլորտում տնտեսական գործունեություն իրականացնող կազմակերպություններում աշխատողների առողջության պահպանման և

☏ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107
ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129

անվտանգության ապահովման նորմերի կիրառման նկատմամբ վերահսկողության (ՏԳՏԴ ծածկագիր՝ C) ստուգաթերթի լրամշակված նախագիծը,

9) Գովազդի թույլտվության նորմերի նվազագույն պահանջների կատարման նկատմամբ վերահսկողություն (Q 86, 87 (ՏԳՏԴ)) Ստուգաթերթ N 3.16 –ը,

10) Մշակող արդյունաբերության ոլորտում տնտեսական գործունեություն իրականացնող կազմակերպություններում աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման նորմերի կիրառման նկատմամբ վերահսկողության ((ՏԳՏԴ) C) Ստուգաթերթ N 4.2-ը,

11) «Շինարարություն» (ՏԳՏԴ ԾԱԾԿԱԳԻՐ՝ F) ոլորտում, «Կոպճահանքերի և ավազահանքերի շահագործում, կավի և ճենակավի (կաոլինի) արդյունահանում» (ՏԳՏԴ ԾԱԾԿԱԳԻՐ՝ B08.12) ոլորտում տնտեսական գործունեություն իրականացնող կազմակերպություններում աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման նորմերի կիրառման նկատմամբ վերահսկողության N 4.3 ստուգաթերթի նախագիծը:

Հաստատվել է.

1) Տեսչական մարմնի կողմից բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման բնագավառում որոշ սանիտարական կանոնների և նորմերի կիրառման ընթացքում առաջանում էր իրավական տարընթերցումներ և խոչընդոտներ պայմանավորված այն հանգամանքով, որ մի շարք սանիտարական կանոններում և նորմերում սահմանված էին դրույթներ կապված նախկին ՀՀ ԱՆ պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության կամ ՀՀ ԱՆ առողջապահական պետական տեսչության վերահսկողության հետ որոնք չեն հանդիսանում Տեսչական մարմնի իրավանախորդները: Նշվածի շրջանակներում, ինչպես նաև հաշվի առնելով ստուգումների և վարչական վարույթների ժամանակ վերհանված խնդիրները՝ 2021 թվականին առաջարկություններ են ներկայացվել բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման բնագավառում պետական քաղաքականություն մշակող լիազոր մարմնին՝ փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ: Արդյունքում, հաստատվել են ՀՀ առողջապահության նախարարի 2021 թվականի մայիսի 12-ի NN 34-Ն,

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107

35-Ն, 36-Ն, 37-Ն, 38-Ն, 39-Ն հրամանները, որոնցով փոփոխություններ և լրացումներ են կատարվել հետևյալ հրամաններում՝

- ՀՀ ԱՆ 2002 թվականի դեկտեմբերի 25-ի ««Խմելու ջուր: Ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի խմելու ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ: Որակի հսկողություն» N 2-III-Ա2-1 սանիտարական նորմերը և կանոնները հաստատելու մասին» N 876 հրաման (փոփոխությունը կատարվել է ՀՀ ԱՆ 12.05.2021թ. N 34-Ն հրամանով),
- ՀՀ ԱՆ 2006 թվականի մայիսի 17-ի ««Լողավազանների կառուցվածքին, շահագործմանը և ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2-III-2.2.4 սանիտարահամաճարակային կանոնները և նորմերը հաստատելու մասին» թիվ 534-Ն հրամանում (փոփոխությունը կատարվել է ՀՀ ԱՆ 12.05.2021թ. N 35-Ն հրամանով),
- ՀՀ ԱՆ 2007 թվականի փետրվարի 12-ի «Հյուրանոցային տնտեսության օբյեկտների տեղակայմանը, կառուցվածքին և շահագործմանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2-III-2.1. սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» թիվ 236-Ն հրամանում (փոփոխությունը կատարվել է ՀՀ ԱՆ 12.05.2021թ. N 36-Ն հրամանով),
- ՀՀ ԱՆ 2009 թվականի դեկտեմբերի 22-ի «Բնակավայրերի տարածքների սանիտարական պահպանմանը, սպառման թափոնների հավաքմանը, պահմանը, փոխադրմանը, մշակմանը, վերամշակմանը, օգտահանմանը, վնասազերծմանը և թաղմանը, բնակավայրերի տարածքների սանիտարական պահպանման, սպառման թափոնների գործածության ոլորտում աշխատանքներ իրականացնող անձնակազմի աշխատանքային անվտանգությանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2.1.7.002-09 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» թիվ 25-Ն հրամանում (փոփոխությունը կատարվել է ՀՀ ԱՆ 12.05.2021թ. N 37-Ն հրամանով),
- ՀՀ առողջապահության նախարարի 2009 թվականի դեկտեմբերի 26-ի «Ստոմատոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների ռենտգեն կաբինետների» N 2.6.3-004-09 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» թիվ 26-Ն հրաման (փոփոխությունը կատարվել է ՀՀ ԱՆ 12.05.2021թ. N 38-Ն հրամանով),

- ՀՀ ԱՆ 2005 թվականի օգոստոսի 30-ի «Թունաքիմիկատների (պեստիցիդների) պահպանման, փոխադրման, կիրառման և վաճառքի» սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» թիվ 790-Ն հրամանում (փոփոխությունը կատարվել է ՀՀ ԱՆ 12.05.2021թ. N 39-Ն հրամանով):

2) Կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) համավարակով պայմանավորված՝ հիվանդության ՀՀ տարածք ներբերումը և տարածումը կանխարգելելու նպատակով, հաշվի առնելով Տեսչական մարմնի սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետերի կողմից իրականացվող ուժեղացված սանիտարակարանտինային վերասկողության ժամանակ առաջացած խնդիրները՝ պարբերաբար առաջարկություններ են ներկայացվել ՀՀ կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 11-ի «Կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) պայմանավորված կարանտին սահմանելու մասին» N 1514-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ, համաձայն որի ընդունվել են ՀՀ կառավարության 11.01.2021թ. N 1-Ն, 18.02.2021թ. N 204-Ն, 16.05.2021թ. N 727-Ն, 19.07.2021թ. N 1127-Ն, 27.08.2021թ. N 1384-Ն, 08.09.2021թ. N 1454-Ն որոշումները: Արդյունքում կանոնակարգվել են Տեսչական մարմնի ՍԲՀԿ-ներում COVID-19-ի շրջանակներում իրականացվող աշխատանքները, ինչպես նաև երկրի ներսում կարանտինային և հակահամաճարակային միջոցառումների խախտումների դեպքում պատասխանատվության ենթարկելու իրավական հիմքերը:

3) Տեսչական մարմնի կողմից առաջարկություններ են ներկայացվել ՀՀ առողջապահության նախարարի 2020 թվականի սեպտեմբերի 4-ի N 17-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոններում և նորմերում փոփոխություններ կատարելու վերաբերյալ, համաձայն որի ՀՀ առողջապահության նախարարի կողմից 2021 թվականին կատարվել են թվով 7 փոփոխություն:

X. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԵՎ ԴՐԱ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՄ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ, ԱՅԴ ԹՎՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԻ ԴԵՄ ԲԵՐՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ

☏ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107
ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129

ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԳՈՐԾԵՐԻ ՄԱՍԻՆ

2021 թվականի ընթացքում Տեսչական մարմնի, Տեսչական մարմնի աշխատողների դեմ տնտեսավարող սուբյեկտների և քաղաքացիների կողմից ներկայացվել են **237 դիմում (բողոքներ)**, որից **143**-ը **վերադասության** կարգով, **94**-ը **դատական** կարգով (Հավելված 1):

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

☏ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129